Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերն այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում (ստորագրվում) են ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար:

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով /դեպքեր, որոնք հաստատում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող պայմանները կամ իրավիճակը/:

Եթե էական սխալի գումարը, կախված տվյալ գործարքի կամ հոդվածի չափից և բնույթից, չի գերազանցում Ընկերության հաշվեկշռային ակտիվների հանրագումարի մեկ տոկոսը, և եթե այդ տեղեկատվության բացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված ֆինանսական դրության մասին հաշվետվության մեջ փոփոխություններ չեն կատարվում:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով/դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո առաջացած պայմանները կամ իրավիճակը/:

Եթե սեփական կապիտալի գործիքներ տիրապետողների շահաբաժինները առաջադրված կամ հայտարարված են հաշվետու ժամանականշրջանի վերջից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստներ՝

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյոք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահանջվող պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների:

Առանձնաբար նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ցուցանիշների վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

4 Զուտ տոկոսային եկամուտներ

ա) Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից	2,854	505
Տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից	-	-
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	376,090	389,452
Տոկոսային եկամուտներ ներդրումներից	-	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**378,944**	**389,957**

բ) Տոկոսային և նմանատիպ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների դիմաց	(4,613)	(14,574)
Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց	-	-
Տոկոսային ծախսեր բանկերից ստացված վարկային գծի դիմաց	(422)	(1,177)
Տոկոսային ծախսեր գործառնական վարձակալության գծով	-	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**(5,035)**	**(15,751)**
Զուտ տոկոսային եկամուտ	**373,909**	**374,206**

5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ/ծախս

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Վարկերի տրամադրումից և սպասարկումից	9,766	26,191
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	-	-
Միջնորդավճարների գծով	(487)	(531)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**9,279**	**25,660**

6 Այլ գործառնական արդյունք

ա) Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/ (վնաս)

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ	907	747
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ	(244,705)	(105,820)
Ընդամենը արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ	**(243,798)**	**(105,073)**

բ) Այլ գործառնական եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	7,004	18,942
Եկամուտներ ստացված հիմնական միջոցների օտարումից	-	-
Այլ եկամուտներ	2,265	1,062
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**9,269**	**20,004**
Այլ գործառնական արդյունք	**(234,529)**	**(85,069)**

7 Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ		
սկզբնական մնացորդ	16,738	86,602
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկման պահուստի ճշգրտում	24,971	41,713
պահուստին մասհանումներ	332,340	592,361
պահուստի օգտագործում	(331,371)	(703,938)
վերջնական մնացորդ	42,678	16,738
Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին /ծախսեր/	(138,298)	(369,604)
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձ /եկամուտ/	214,773	246,275
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկման ճշգրտում	(24,971)	(41,713)
Ընդամենը Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ	51,504	(165,042)

8 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ	(56,151)	(57,906)
Պարգևատրումներ և լրավճարներ	(18,360)	(15,885)
Արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ	(6,429)	(7,590)
Անձնակազմի ուսուցման ծախսեր	(130)	(48)
Անձնակազմի այլ ծախսեր	(250)	(302)
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	(81,320)	(81,731)

9 Վարչական և այլ գործառնական ծախսեր

ա) Այլ վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հիմնական միջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(6,652)	(4,962)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(9,306)	(9,869)
Մասնագիտական ծառայություններ	(2,100)	(1,070)
Հասարակական կապերի գծով ծախսեր	(1,296)	(1,135)
Գրասենյակային ծախսեր	(1,440)	(302)
Այլ վարչական ծախսեր	(7,159)	(3,431)
Ընդամենը այլ վարչական ծախսեր	(27,953)	(20,769)

բ) Այլ գործառնական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Գովազդի ծախսեր	(126)	(126)
Անվտանգության գծով ծախսեր	(3,190)	(3,240)
Ներկայացուցչական ծախսեր	(190)	(161)
Ամորտիզացիոն ծախսեր	(22,746)	(23,513)
Այլ գործառնական ծախսեր	(1,907)	(2,154)
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**(28,159)**	**(29,194)**
Ընդամենը վարչական և այլ գործառնական ծախսեր	**(56,112)**	**(49,963)**

10 Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի դրույքաչափը գործող օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում 2022թ -ին կազմում է 18% (2021թ -ի ն՝ 18%): Հետաձգված շահութահարկի գումարը ևս հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ընկերությունը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերը հարկային առումով հաշվարկելիս առաջնորդվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն ուղղված պարզաբանումով, համաձայն որի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերի ճանաչման համար պետք է հիմք ընդունել վարկերի և փոխառությունների պայմանագրերում ամրագրված անվանական տոկոսադրույքները:

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	(61,712)	(31,958)
Հետաձգված հարկի գծով ծախս/փոխհատուցում	2,010	7,086
Նախորդ տարվա հարկի գծով ծախսի ճշտում	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(59,702)**	**(24,872)**

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Կանխիկ դրամական միջոցներ	4,272	10,252
Ընթացիկ հաշիվներ բանկերում	62,954	145,687
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**67,226**	**155,939**

12 Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տրամադրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ	2,327,703	2,389,422
Տեղաբաշխված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի գծով պահուստ	(42,678)	(16,738)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	**2,285,025**	**2,372,684**

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Շենք, շինություն	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Առ 31.12.2020թ.	314,450	3,494	13,054	9,886	10,182	11,978	2,840	365,884
Ավելացում	-	-	-	199	210	-	157	566
Օտարում/դուրս գրում		(77)	-	(380)	(294)		(179)	(930)
Վերանորոգումի ց արժեքի աճ	-	-	-		-	-		-
Առ 31.12.2021թ.	314,450	3,417	13,054	9,705	10,098	11,978	2,818	365,520
Ավելացում	-	-	-	3,042	256	-	-	3,298
Օտարում/դուրս գրում		(32)	-	(80)	(60)	-	(158)	(330)
Վերանորոգումի ց արժեքի աճ	-	-	-		-	-	-	-
Առ 31.12.2022թ.	314,450	3,385	13,054	12,667	10,294	11,978	2,660	368,488
Մաշվածություն								
առ 31.12.2020թ.	103,645	3,182	11,158	9,498	9,336	11,075	1,857	149,751
Մաշվածության ծախս	21,081	199	1,008	291	280	276	377	23,512
Օտարում/ Դուրս գրում	-	(77)	-	(380)	(275)		(179)	(911)
առ 31.12.2021թ.	124,726	3,304	12,166	9,409	9,341	11,351	2,055	172,352
Մաշվածության ծախս	21,081	30	442	364	227	274	329	22,747
Օտարում/ Դուրս գրում	-	(32)	-	(80)	(60)		(158)	(330)
առ 31.12.2022թ.	145,807	3,302	12,608	9,693	9,508	11,625	2,226	194,769
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2021	189,724	113	888	296	757	627	763	193,168
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2022	168,643	83	446	2,974	786	353	434	173,719

14 Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	-	-
Ընդամենը բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	-	-

15 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ներգրավված ցպահանջ փոխառություններ	-	-
Ներգրավված ժամկետային փոխառություններ մասնակիցներից	47,595	203,937
Ընդամենը փոխառություններ	**47,595**	**203,937**

16 Հետաձգված հարկեր

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	(26,263)	(33,350)
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս/փոխհատուցում	2,009	7,087
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	-	-
Տարեվերջի մնացորդ	(24,254)	(26,263)

17 Այլ պարտավորություններ և պահուստներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Կրեդիտորական պարտքեր բյուջեի նկատմամբ	46,268	23,128
Առևտրային կրեդիտորական պարտքեր	19,628	18,230
Պահուստներ	158	201
Այլ պարտավորություններ	12,956	17,051
Ընդամենը այլ պարտավորություններ	**79,010**	**58,610**

18 Կապիտալ և պահուստներ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,616,700.0 հազար դրամ, որը բաղկացած է հայտարարված 32 314 հատ սովորական և 20 հատ արտոնյալ բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 50 000 ՀՀ դրամ արժողությամբ և ամբողջովին վճարված է: 2022թ. ընկերության կանոնադրական կապիտալի համալրում չի կատարվել (2021թ-ին՝ նույնպես): 2022 թ-ին հայտարարվել և վճարվել են 120,000 հազ.դրամ շահաբաժիններ: Գլխավոր պահուստին կատարվել են 2022թ-ի արդյունքներից ելնելով մասհանումներ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Վարկային կազմակերպության կապիտալում մասնակիցներն են.

Բաժնետերեր	Կանոնադրական կապիտալի մեջ մասնակցություն		
	սովորական հազ.դրամ	*արտոնյալ* հազ.դրամ	%
1 . Հայկուհի Նիկոլայի Գաբրիելյան	406,900	250	25.18
2. Էդիտա Նիկոլայի Գաբրիելյան	311,050	250	19.26
3. Էլլադա Երվանդի Գասպարյան	608,700	250	37.67
4. Լիլիթ Նիկոլայի Աբրահամյան	201,200	250	12.46
5. Արտուշ Վասիլի Աբրահամյան	87,850	-	5.43
	1,615,700	1,000	100

Ընդամենը՝ 1,616,700

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Վարկային կազմակերպության կապիտալում մասնակիցներն են.

Բաժնետերեր	Կանոնադրական կապիտալի մեջ մասնակցություն		
	սովորական հազ.դրամ	*արտոնյալ* հազ.դրամ	%
1 . Հայկուհի Նիկոլայի Գաբրիելյան	406,900	250	25.18
2. Էդիտա Նիկոլայի Գաբրիելյան	311,050	250	19.26
3. Էլլադա Երվանդի Գասպարյան	608,700	250	37.67
4. Լիլիթ Նիկոլայի Աբրահամյան	201,200	250	12.46
5. Արտուշ Վասիլի Աբրահամյան	87,850	-	5.43
Ընդամենը	1,615,700	1,000	100

Ընդամենը՝ 1,616,700

Վերագնահատման պահուստներ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	133,484	150,170
Ընդամենը վերագնահատման պահուստներ	**133,484**	**150,170**

Գլխավոր պահուստին 2022թ-ի արդյունքներից ելնելով կատարվել են մասհանումներ 2,579 հազ.դրամի չափով:

19 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական (էական) ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների,առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման